ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/17

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ

Բողոք բերող՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ

Համանման բողոք բերող՝ «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ

Երրորդ անձ՝ «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ

Մասնակցությամբ՝

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ա. Պետրոսյանի,

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Չիլինգարյանի,

«Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ռ. Բաղալյանի, ներկայացուցիչ՝ Է. Չատինյանի,

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ա. Հովհաննիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 09.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն 1) կողմից 16.03.2021թ.-ին ներկայացված համանման բողոքը (այսուհետ նաև՝ համանման բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

2. ընդունել գների նվազեցման նպատակով միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու վերաբերյալ որոշում:

Ընկերություն 1-ը, ներկայացրած համանման բողոքով, Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. դադարեցնել «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ.-ի թիվ 21/10-2 արձանագրության 5-րդ բաժնի 1-ին կետով և 04.03.2021թ.-ի թիվ 21/10-3 արձանագրության 2-րդ բաժնի «ա» կետով կայացված որոշումները,

2. ճանաչել «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ին որպես նվազագույն գին առաջարկած մասնակից:

Բողոքներ քննող անձին «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 09.03.2021թ.-ին:

09.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/17 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձին «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը մակագրվել է 16.03.2021թ.-ին:

17.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված համանման բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/17 համարի ծածկագիրը:

18.03.2021թ.-ին՝ ներկայացված բանավոր միջնորդության հիման վրա «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

18.03.2021թ.-ին, 25.03.2021թ.-ին և 08.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.04.2021թ.-ին:

2. «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն 09.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կարիքների համար աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 19.02.2021թ. որոշմամբ հաստատված հայտարարության և հրավերի համաձայն՝ հայտարարվել է «ԱԱԳԼ-ԳՀԽՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցում:

1.2. Հայտերը բացվել են 2021 թ. մարտի 1-ին՝ ժամը 11:00, և գնահատող հանձնաժողովի բացման նիստի N 21/10-2 արձանագրության համաձայն՝ ոչ գնային պայմանները բավարարող մասնակիցները՝ «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն, «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն, «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ-ն և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, հրավիրվել են գների նվազեցման բանակցությունների 2021 թվականի մարտի 4-ին՝ ժամը 12:00-ից 12:30:

1.3. Նշված օրը «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Սեդրակ Բաղալյանը ներկայացել է գների նվազեցման բանակցություններին, իսկ մյուս մասնակիցներից ներկայացել է միայն «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ ներկայացուցիչը:

1.4. Նշված գնանշման հարցման շրջանակում գնվելիք ծառայության նախահաշվային արժեքը սահմանվել է 4 100 000 ՀՀ դրամ, «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերության գնային առաջարկը եղել է ամենացածրը՝ 3 400 000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 4 080 000 ՀՀ դրամ ԱԱՀ-ով, իսկ «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ գնային առաջարկը՝ 3 495 000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 4 194 000 ՀՀ դրամ ԱԱՀ-ով:

1.5. «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Սեդրակ Բաղայանը ներկայացրել է ընկերության տնօրենի կողմից տրված լիազորագիր, սակայն վերջինիս լիազորագիրը չի ընդունվել, ինչի մասին նշված է նաև նիստի արձանագրության մեջ: Գնումների համակարգող Ա. Պետրոսյանը լիազորագրի վրա նշել է հետևյալը՝ «Հստակ չի ներկայացված, թե որ մրցույթին պիտի մասնակցի, բացակայում է մրցույթի ծածկագիրը»: Արդյունքում Սեդրակ Բաղայանը չի մասնակցել նիստին և չի կարողացել ներկայացնել վերանայված գնային առաջարկ:

1.6. Ընդ որում, այդ ժամանակ դահլիճում ներկա են եղել գնահատող հանձնաժողովի քարտուղարը, պատվիրատուի ֆինանսական տնօրենը, ով հանձնաժողովի անդամ չէ և «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ ներկայացուցիչը:

1.7. 2021 թվականի մարտի 4-ի հանձնաժողովի նիստի N 21/10-3 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել բանակցություններին ներկա միակ մասնակից «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն, որի առաջարկած վերջնական գինը եղել է 3 399 166.67 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, 4 079 000 ԱԱՀ-ով: Հարկ ենք համարում ընդգծել, որ նշված գինը չնչին տարբերությամբ նվազ է «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերության առաջարկած գնից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Լիազորագրի բովանդակությանը օրենքով կոնկրետ պահանջներ առաջադրված չեն, մասնավորապես՝ որևէ իրավական նորմով սահմանված չէ նման իրավիճակում լիազորագրում մրցույթի ծածկագիրը նշելու պահանջ: Գնահատող հանձնաժողովը ևս ո՛չ նիստի արձանագրության մեջ, ո՛չ լիազորագրի վրա չի նշել նման պահանջ սահմանող որևէ իրավական նորմ: Դա նշանակում է, որ այդ պատճառաբանությամբ անձի լիազորությունները չճանաչելու իրավական հիմքն ընդհանրապես բացակայում է:

«Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերության տնօրենի կողմից Սեդրակ Բադալյանին տրված լիազորագրի համաձայն՝ վերջինս լիազորվել է «...ընկերության անունից հանդես գալ Ընկերության անունից հանդես գալու «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ և ներկա գտնվելու մրցույթի շրջանակներում ներկայացված հայտերի ամփոփման նիստին և մասնակցելու գների նվազեցման բանակցություններին, այդ նպատակով ստորագրելու և ներկայացնելու դիմումներ, առարկություններ, բացատրություններ և այլ փաստաթղթեր, ստանալու Ընկերությանը հասցեագրված ցանկացած փաստաթուղթ, ինչպես նաև կատարելու սույն լիազորագրի հետ կապված անհրաժեշտ այլ գործողություններ...»:

Գտնում ենք, որ Սեդրակ Բադալյանը լիազորված է եղել մասնակցելու սույն գնանշման հարցման շրջանակներում գների նվազեցման բանակցություններիրին, իսկ լիազորագրում նշված մրցույթը հստակ է, քանի որ առկա են այն անհատականացնելու համար անհրաժեշտ հանգամանքներ, որոնք հանգում են հետևյալին՝

1. Լիազորագրում հստակ նշվել է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամը՝ որպես պատվիրատու:

2. Լիազորագրում ուղղակիորեն նշվել է, որ Սեդրակ Բադալյանը լիազորվում է մասնակցելու գների նվազեցման բանակցություններին:

3. Լիազորագիրը տրվել է բանակցությունների կայացման օրը՝ 2021 թվականի մարտի 4-ին, 10 օր ժամկետով:

4. «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությունն այս պահի դրությամբ չի դիմել և չի հանդիսանում «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից հայտարարված որևէ այլ գնման ընթացակարգի մասնակից:

5. Gnumner.am կայքում առկա տեղեկությունների համաձայն՝ նշված ժամանակահատվածում առկա չէ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից հայտարարված որևէ այլ գնման շրջանակներում գների նվազեցման բանակցությունների անցկացման մասին հրապարակում:

6. Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությունը աուդիտորական կազմակերպություն է, իսկ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ որևէ այլ հայտարարություն և հրավեր հրապարակված չէ:

Վերը նշված հանգամանքները համակցության մեջ վկայում են այն մասին, որ «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերության տնօրենի կողմից Սեդրակ Բադալյանին տրված լիազորագիրը բավարար չափով հստակ է ձևակերպված և հնարավորություն է տալիս ամբողջությամբ անհատականացնելու լիազորագրում նշված մրցույթը: Հետևաբար, Սեդրակ Բադալյանն օժտված է եղել նշված գնման ընթացակարգի շրջանակներում կայացած գնի նվազեցման բանակցություններին մասնակցելու համապատասխան լիազորությամբ: Դա նշանակում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից վերջինիս լիազորությունները չճանաչելը իրավաչափ չի եղել: Այս առնչությամբ հարկ ենք համարում վկայակոչել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ իրավունքը որևէ ձևով չարաշահելը չի թույլատրվում: Դա նշանակում է, որ գնահատող հանձնաժողովը չի կարող չգրված ձևական պահանջների խախտման պատճառաբանությամբ ընկերությանը զրկել գնի նվազեցման բանակցություններին մասնակցելու իրավունքից:

Կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կազմը բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, որոնք սահմանվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել հանձնաժողովի նիստին ներկա անդամների կեսից ավելին:

Տվյալ դեպքում 2021 թվականի մարտի 4-ի հանձնաժողովի նիստի N 21/10-3 արձանագրությունը ստորագրել են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և 4 անդամները: Մինչդեռ «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Սեդրակ

Բաղալյանին տրված լիազորագրի հարցը քննարկելիս նիստերի դահլիճում ներկա են եղել հանձնաժողովի քարտուղարը և պատվիրատուի ֆինանսական տնօրենը, ով հանձնաժողովի անդամ չէ:

Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը:

Արձանագրությունը փաստացի ստորագրած անձանց բացակայությամբ նիստի անցկացման հանգամանքը հանգեցնում է հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների ոչ իրավաչափության, որպիսի հանգամանքը պարզելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել գնահատող հանձնաժողովի՝ 2021 թվականի մարտի 4-ին՝ ժամը 12:00-12:30 կայացած նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշվածը, գտնում ենք, որ «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Սեդրակ Բաղալյանի լիազորությունները չճանաչելը եղել է ոչ իրավաչափ, և վերջինս անհիմն կերպով զրկվել է նշված նիստին մասնակցելու և վերանայված գնային առաջարկ ներկայացնելու հնարավորությունից:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,
2. ընդունել գների նվազեցման նպատակով միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու վերաբերյալ որոշում:

3. <u>«Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ն 16.03.2021թ.-ին ներկայացրած համանման բողոքով հայտնել է հետևյալը.

««Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի

2021թ. մարտի 3-ի թիվ 21/10-2 արձանագրության 5-րդ բաժնի 1-ին կետով կայացված որոշման դեմ) և գնահատող հանձնաժողովի 2021թ. Մարտի 4-ի թիվ 21/10-3 արձանագրության 2-րդ բաժի ա/ կետի որոշման դեմ:

1. «Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Նշված գնանշման հարցմանը մասնակցության հայտ են ներկայացրել

ա/ «Էյ էմ էիչ աուդիտ» ՓԲԸ-ն

բ/ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն

գ/ «Բի Դի Օ Արմենիա» ՓԲԸ-ն

դ/ «էֆ էս Փի Ըդվայս» ՓԲԸ-ն

է/ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն

3. 2021թ. Մարտի 1-ին գնահատող հանձնաժողովը հրապարակել է թիվ 21/10-2 արձանագրությունը, որի 5-րդ բաժնի 1-ին կետով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «էֆ էս Փի Ըդվայս» ՍՊ ընկերության հայտը էլ. ստորագրության բացակայության պատճառով ճանաչվել է հրավերի պայմաններին անհամապատասխան և հայտը մերժվել է

1. «Գնահատող հանձնաժողովի կողմից 2021թ. մարտի 1-ին թիվ 21/10-2 արձանագրությամբ «էֆ էս Փի Ըդվայս» ՍՊ ընկերության հայտը էլ. ստորագրության բացակայության պատճառով ճանաչվել է հրավերի պայմաններին անհամապատասխան և հայտը մերժվել է:

2. Գնահատող հանձնաժողովի կողմից 2021թ. մարտի 1-ին թիվ 21/10-2 արձանագրությամբ «էֆ էս Փի Ըդվայս» ՍՊ ընկերության զրկվել է բանակցություններին մասնակցելու իրավունքից

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու գնահատող հանձնաժողովի .... և որոշումները:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու ... գնահատող հանձնաժողովի գործողությունները ... որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

Հիմք ընդունելով վերը նշված նորմերը, ներկայացնում եմ սույն բողոքը, քանի որ գտնում եմ Գնահատող հանձնաժողովի 2021թ. մարտի 1-ի թիվ 21/10-2 արձանագրության 5-

րդ բաժնի 1-ին կետով, անօրինական որոշմամբ, ոտնահարվել է «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊ ընկերության իրավունքները:

Այսպես՝

1. Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 11-րդ ենթակետի՝ Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

2. Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի <<.. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:>>:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ պատվիրատուն իր կողմից հրապարակված արձանագրությունների մեջ շատ ճիշտ է նշել այն հոդվածները, որով կարգավորվում են տվյալ իրավահարաբերությունները, <<40. 4)հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը…>> բայց չգիտես ինչու լրիվ այլ մեկնաբանում է տվել այդ հոդվածներին:

Ամփոփելով վերոգրյալը և հուսալով, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, ով շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից:»:

Ելնելով վերոգրյալից՝ «էֆ էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. դադարեցնել «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ.-ի թիվ 21/10-2 արձանագրության 5-րդ բաժնի 1-ին կետով և 04.03.2021թ.-ի թիվ 21/10-3 արձանագրության 2-րդ բաժնի «ա» կետով կայացված որոշումները,

2. ճանաչել «էֆ էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ին որպես նվազագույն գին առաջարկած մասնակից:

4. <u>«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 10.03.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3404-2021 և 17.03.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/3841-2021 գրություններով դիմել է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի և «էֆ էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից համապատասխանաբար 09.03.2021թ.-ին և 16.03.2021թ.-ին ներկայացված բողոքների վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն ներկայացված դիրքորոշումներով հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Ա.Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ (ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)» հիմնադրամի կողմից սույն թվականի փետրվարի 22-ին կազմակերպվել է ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10 ծածկագրով մրցույթ գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6–րդ մասի համաձայն:

1. Հայտերի բացման ժամանակ «էֆ էՍ ՓԻ Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելվածները վավերացված չեն եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հաշվի առնելով գնային առաջարկի անհամապա-տասխանությունը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017

թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը և 41-րդ կետը «էֆ էՍ Փի Ըդվայս» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը մերժվել է:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ «էֆ էՍ Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

2. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն հրավիրվել է առաջարկված գների նվազեցման բանակցություններ: Բանբակցություններին ներկա են գտնվել «էյ-էմ-էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի տնօրենը և «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչը: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչը ներկայացել էր առանց լիազորագրի: Մրցակցությունը խթանելու նպատակով և «էյ-էմ-էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի տնօրենի համաձայնությամբ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ին հնարավորություն տրվեց ներկայացնել էլեկտրոնային տարբերակով ուղարկված լիազորագիր: Տպված ենթադրյալ լիազորագիրը հաստատված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացակայում էր ձեռքբերվող ծառայության անվանումը և մրցույթի ծածկագիրը, որը չէր հստակեցնում բանակցությունների մասնակցելու իրավունքը:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:»:

5. <u>Երրորդ անձ՝ «էյ-էմ-էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «էյ-էմ-էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն 18.03.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Երրորդ անձը 22.03.2021թ.-ին ներկայացրած թիվ ԱՀ/22/03/2021 դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ս.թ. մարտի 18-ին մասնակցեցի ԳԲՔԱ-ԷՕ-2021/17 ծածկագրով բողոքի քննության նիստին՝ ներկայացնելով էյ-էմ-էյչ Աուդիտ ՓԲԸ շահերը: Ստորև ներկայացնում ենք մեր

դիրքորոշումը Գրանթ Թորնթոն ՓԲԸ և Էս էֆ Փի ընդվայս ՍՊԸ ներկայացրած բողոքների վերաբերյալ.

1. Գրանթ Թորնթոն ՓԲԸ լիազորագրի թերությունների մասով.

Կարևոր եմ համարում նշել, որ ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ս.թ. մարտի 4-ին ժամը 12:00-ին հրավիրված գների նվազեցման բանակցություններին ներկայացել էին Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ Գլխավոր տնօրենը և Գրանթ Թորնթոն ՓԲԸ ներկայացուցիչը: Հանձնաժողովի քարտուղարը ծանոթացավ ներկայացած անձանց հետ և ներկայացուցչից պահանջեց նրա լիազորագիրը: Գրանթ Թորնթոն ՓԲԸ ներկայացուցիչը հայտնեց, որ ինքը լիազարագիր չունի և տեղյակ չի եղել, որ պետք է ներկայանար լիազորագրով: Նա խնդրեց հնարավորություն տալ կազմակերպել լիազարագրի հարցը: Ի պատասխան հանձնաժողովի քարտուղարի հարցին՝ Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ Գլխավոր տնօրենը նշեց, որ հաշվի առնելով, որ երկար տարիներ ճանաչում է Գրանթ Թորնթոն ՓԲԸ Տնօրենին և իրենց գործընկերային հարաբերությունները, չի առարկում որպեսզի հնարավորություն տրվի ներկայացնելու լիազորագիրը: Ժամը մոտ 12:15-12:20 էլ. փոստով ուղարկվեց լիազորագիր, որը տպվեց և քարտուղարը ծանոթացավ դրա բովանդակությանը: Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ Գլխավոր տնօրենը ևս խնդրեց ծանոթանալ լիազորագրին և տեսավ, որ այն չի պարունակում մրցույթի ծածկագիրը և հստակեցում, որ այն տրված է աուդիտորական ծառայությունների հետ կապված մրցույթի համար: Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ Գլխավոր տնօրենի համար բավականաչափ հստակ չէր լիազորագրի բովանդակությունը և ներկայացուցչի լիազորությունները: Ի լրումն, այն ներկայացվել էր էլեկտրոնային եղանակով, սակայն ձեռքով ստորագրված և կնքած՝ առանց էլեկտրոնային ստորագրության: Ուստի Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ Գլխավոր տնօրենը տեղեկացրեց, որ իր համար ընդունելի չէ տվյալ լիազորագիրը և առաջարկեց չընդունել այն: Ներկայացուցիչը պահանջեց նշում կատարել լիազորագրի վրա, որից հետո դուրս եկավ սենյակից: Մինչև 12:30-ը նոր լիազորագիր չներկայացվեց, ներկայացված լիազորագրի բնօրինակը ևս չներկայացվեց և Գրանթ Թորնթոն ՓԲԸ Տնօրենը չներկայացավ մրցույթի վայր:

Գտնում ենք, որ Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ Գլխավոր տնօրենի բարի կամքի շնորհիվ ընձեռված հնարավորությունը Գրանթ Թորնթոն ՓԲԸ-ի Տնօրենը և իրավաբանները լիարժեք ու ամբողջությամբ չեն օգտագործել և մինչև բանակցությունների ավարտը հստակ բովանդակությամբ ու պատշաճ ձևով լիազորագիր չեն ներկայացրել: Արդյունքում

Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ Գլխավոր տնօրենը օգտվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված իր իրավունքներից:

Վերոնշյալից ելնելով, մեր դիրքորոշումն է, որ բողոքի 1-ին և 2-րդ կետերը պետք է մերժվեն:

2. Նիստի տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը պահանջելու միջնորդության վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածով սահմանում է Օրենքի կարգավորման առարկան.

«1. Սույն օրենքը կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները:»

Ըստ 2017թ. մայիսի 4-ի ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 5-րդ ենթակետի.

«5) նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է.»:

Օրենքում ներկայացված է միայն տարբեր արձանագրություններ կազմելու պահանջը: Գտնում ենք, որ Կարգով պետք է հստակեցվեր այդ պահանջի իրականացումը, այլ ոչ թե առաջադրվեր ևս մեկ պահանջ՝ տեսաձայնագրման կամ ձայնագրման վերաբերյալ: Դրա իրականացումը կապված է մի շարք կարևոր պայմանների ապահովման հետ, որոնք Օրենքում կամ Կարգում հստակեցված չեն: Այսպես, սահմանված չեն՝ 1. տեսաձայնագրման կամ ձայնագրման տեխնիկական պահանջներ, 2. որքան ժամանակ պետք է այն պահպանվի նիստից հետո, 3. առկա է արդյոք անկախ սերվեր, որի վրա պետք է նիստի ընթացքում կատարվի ձայնագրությունը, որպեսզի չջնջվի կամ փոփոխվի որևէ անձի կողմից և այլն: Քանի որ Կարգում այս հարցերին անդրադարձ չկա, տեսաձայնագրման կամ ձայնագրման վերաբերյալ պահանջը ձևական է և գործնականում պատվիրատուների (բոլոր) կողմից պատշաճ ձևով չի կարող իրականացվել: Հետևաբար, դրա միջոցով ակնկալվող ապացույցը վստահելի և ընդունելի չի կարող համարվել:

Գտնում ենք նաև, որ Գրանթ Թորնթոն ՓԲԸ-ն չհամակերպվելով լիազորագրի հարցում իր բացթողնման հետ, ցանկանում է որևէ այլ ձևով վնաս հասցնել՝ չարաշահելով իր իրավունքները, ինչը չի թույլատրվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածով:

Մեր դիրքորոշումն է, որ վերոնշյալ հիմքերով այս միջնորդությունը պետք է մերժվի:

3. ԷՖ Էս Փի ընդվայս ՍՊԸ ներկայացրած համանման բողոքի վերաբերյալ.

Ս.թ. մարտի 18-ին Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ-ն տեղեկանալով Էս Էֆ Փի ընդվայս ՍՊԸ բողոքի մասին ստուգեց, թե արդյոք այն ս.թ. մարտի 1-ի դրությամբ հանդիսանում էր աուդիտորական կազմակերպություն և իրավունք ուներ աուդիտորական ծառայություններ մատուցել: Նման պահանջ սահմանված է եղել ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10 ծածկագրով աուդիտորական ծառայությունների ձեռքբերման մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրի 1-ին կետով: Պարզվեց, որ ընկերությունը 2021թ. մարտի 18-ի դրությամբ ներառված չէր Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի (ՀԱՓՀՊ) կողմից վարվող աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում (այսուհետ՝ ռեեստր) կամ որևէ այլ նման մասնագիտական կառույցի ռեեստրում, ինչպես դա պահանջվում է Աուդիտորական գործունեության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով: ՀԱՓՀՊ ռեեստրը վարվում է էլեկտրոնային ձևով և հանրությանը մատչելի է http://reestr.aaaa.am/ հղմամբ: Դրա նպատակն է շահագրգիռ անձանց տեղեկացնել, թե որ կազմակերպությունները իրավունք ունեն կոչվելու աուդիտորական և այդպիսի ծառայություններ մատուցելու: 2021թ. հունվարի 1-ից աուդիտորական գործունեությունը այլևս լիցենզավորվող չէ:

Մեր կողմից պահպանվել է 2021թ. մարտի 18-ի դրությամբ ռեեստրի ֆայլը, որը կցում ենք սույն դիրքորոշմանը որպես ապացույց: Դրանում ընկերության անվանումը չկա: Այն ռեեստրում ներառվել է 2021թ. մարտի 23-ի դրությամբ, մինչդեռ ՀԱՓՀՊ-ին Էֆ Էս Փի ընդվայս ՍՊԸ անդամակցելու որոշման ամսաթիվը 2021թ. փետրվարի 17-է, որի հաջորդող օրվանից սկսած՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև փետրվարի 26-ը, ընկերության անվանումը պետք է արդեն ներառված լիներ ռեեստրում, որպեսզի այն բավարարեր ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի վերը նշված պահանջին: Ընկերությունը, ըստ վերը նշված օրենքի և հոդվածի, հանդիսանում է աուդիտորական կազմակերպություն միայն ռեեստրում գրանցման ամսաթվից:

Ստացվում է, որ թիվ ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ս.թ. մարտի 1-ի Արձանագրություն N 21/10-2

որոշման 1-ին կետում գնահատող հանձնաժողովը որպես հիմք պետք է ընդուներ նաև այս հանգամանքը և ընկերության հայտը անբավարար գնահատեր ու մերժեր նաև այս հիմքով, ինչը չի արվել:

Էյ-Էմ-Էյչ Աուդիտ ՓԲԸ-ն խնդրում է լրացնել ս.թ. մարտի 1-ի Արձանագրություն N 21/10-2 որոշման 1-ին կետը վերը նշված հիմքով:»:

6. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 22.02.2021թ.-ին հայտարարվել է «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 01.03.2021թ.-ին:

ii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Կատարողը պետք է աուդիտորական գործունեությունն իրականացնի «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում և ներկայացնի աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ն և «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 01.03.2021թ.-ի նիստի թիվ 21/10-2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված դիմում-հայտարարությունը՝ թիվ 1 հավելվածը և գնային առաջարկը՝ թիվ 2 հավելվածը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

v. Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և ոչ գնային պայմանները

բավարարող բոլոր մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ 04.03.2021թ.-ին ժամը 12:00-ից 12:30-ը:

vi. Հանձնաժողովի 04.03.2021թ.-ի նիստի թիվ 21/10-3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչը ներկայացել է թերի լիազորագրով, որի արդյունքում զրկվել է բանակցություններին մասնակցելու իրավունքից:

vii. Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին նախապատվություն տալու սկզբունքով:

viii. www.gnumner.am համացանցային կայքում 04.03.2021թ.-ից մինչև 09.03.2021թ.-ը հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ սահմանելով 5 օրացուցային օր անգործության ժամկետ:

ix. «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից 04.03.2021թ.-ին ներկայացված լիազորագրի համաձայն՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, լիազորել է ընկերության աշխատակից Ս. Բադալյանին, ընկերության անունից հանդես գալու «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ և ներկա գտնվելու մրցույթի շրջանակներում ներկայացված հայտերի ամփոփման նիստին և մասնակցելու գների նվազեցման բանակցություններին, այդ նպատակով ստորագրելու և ներկայացնելու դիմումներ, առաջարկություններ, բացատրություններ և այլ փաստաթղթեր, ստանալու ընկերությանը հասցեագրված ցանկացած փաստաթուղթ, ինչպես նաև կատարելու սույն լիազորագրի հետ կապված անհրաժեշտ այլ գործողություններ: Լիազորագիրը տրվել է 10 (տաս) օր ժամկետով:

x. Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) կողմից վարվող աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում առկա տեղեկատվության համաձայն՝ «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ն 17.02.2021թ.-ի թիվ 30-Ա որոշմամբ ընդգրկվել է ռեեստրի ցանկում:

xi. Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի կողմից 10.03.2021թ.-ին տրված թիվ Ա/ԵՆ-19 տեղեկանքի համաձայն՝ «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ն Պալատի խորհրդի 17.02.2021թ.-ի թիվ 30-Ա որոշման համաձայն համարվում է պալատի անդամ և պալատի ռեեստրում գրանցված է ՀԳԳՀ 1 21 0503 համարի ներքո:

7. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից 09.03.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, իսկ «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է մասնակիորեն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության

ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի

հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ

միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին: Նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու համար լիազորագիրը պետք է վավերացնի նոտարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Հրավերի 2.6-րդ կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ նաև՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 22.02.2021թ.-ին հայտարարված «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն և «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ն Հանձնաժողովի 01.03.2021թ.-ի նիստի թիվ 21/10-2 արձանագրության համաձայն հրավիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ 04.03.2021թ.-ին ժամը 12:00-ից 12:30-ը: Հանձնաժողովի 04.03.2021թ.-ի նիստի թիվ 21/10-3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչը ներկայացել է թերի լիազորագրով, որի արդյունքում զրկվել է բանակցությունների մասնակցելու իրավունքից: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից 04.03.2021թ.-ին ներկայացված լիազորագրի համաձայն՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, լիազորել է ընկերության աշխատակից Ս. Բադալյանին, ընկերության անունից հանդես գալու «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա

(Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ և ներկա գտնվելու մրցույթի շրջանակներում ներկայացված հայտերի ապփոփման նիստին և մասնակցելու գների նվազեցման բանակցություններին, այդ նպատակով ստորագրելու և ներկայացնելու դիմումներ, առաջկություններ, բացատրություններ և այլ փաստաթսթեր, ստանալու ընկերությանը հասցեագրված ցանկացած փաստաթուղթ, ինչպես նաև կատարելու սույն լիազորագրի հետ կապված անհրաժեշտ այլ գործողություններ: Լիազորագիրը տրվել է 10 (տաս) օր ժամկետով:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից 04.03.2021թ.-ին բանակցությունների ժամանակ ներկայացված լիազորագիրը, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ այն ելնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ լիազորագրին վերաբերող դրույթներից և չի հակասում վերջիններին: Ներկայացված լիազորագրի բովանդակությունը լիարժեք թույլ էր տալիս լիազորված անձին մասնակցել Պատվիրատուի կողմից կազմակերպված միաժամանակյա բանակցություններին: Ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի իրավակարգավորումներից, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 04.03.2021թ.-ի լիազորագիրը, որպես միակողմանի գործարք, համապատասխանում է նաև Օրենսգրքի՝ միակողմանի գործարքների ձևին և բովանդակությանը վերագրվող պահանջներին: Այն կնքված է փաստաթուղթ կազմելու միջոցով, արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի՝ Ընկերության տնօրենի կողմից:

Ընդ որում, հարկ է փաստել, որ Կարգով և Հրավերով չեն սահմանվել լիազորագրի ձևի և բովանդակության վերաբերյալ լրացուցիչ պահանջներ, որոնց պետք էր այն համապատասխաներ (որոշակի ձևաթղթի վրա կնքելը և այլն):

Ամփոփելով վերոնշյալները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընկերության կողմից բանակցությունների ժամանակ ներկայացված լիազորագիրը ներկայացվել է ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 22.07.2020թ.-ին հայտարարված «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10»

ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կայացնելով «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ին բանակցություններին մասնակցելու իրավունքից զրկելու մասին որոշում՝ գործել է ոչ իրավաչափ, որպիսի պայմաններում «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Անդրադառնալով «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքին, դրանում առկա պահանջներին, արտացոլված իրավական ու փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 22.02.2021թ.-ին հայտարարված «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածը՝ դիմում-հայտարարությունը և թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը հաստատվեծ չեն եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հանձնաժողովի 01.03.2021թ.-ի նիստի թիվ 21/10-2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված դիմում-հայտարարությունը՝ թիվ 1 հավելվածը և գնային առաջարկը՝ թիվ 2 հավելվածը, հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է ընկերության կողմից ներկայացված հայտը մերժել:

Սույն որոշման իրավական դրույթների համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից հայտին կից ներկայացված թիվ 1 հավելվածը՝ դիմում-հայտարարությունը և թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չլինելու պարագայում Հանձնաժողովի կողմից, մասնակցի հայտը մերժելու մասին կայացված որոշման արդյունքում, թույլ է տրվել Կարգի 41-րդ կետով և Հրավերի 8.9-րդ կետով սահմանված պահանջների խախտում, քանի որ Հանձնաժողովը, մասնակցի կողմից ներկայացված հայտը, այդ թվում՝ նաև գնային առաջարկը, էլեկտրոնային թվային ստորագրված չլինելու պարագայում, պետք է ծանուցեր վերջինիս և առաջարկեր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ոստի նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 22.07.2020թ.-ին հայտարարված «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «էֆ էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելով, գործել է ոչ իրավաչափ, որպիսի պայմաններում ընկերության կողմից ներկայացված՝ «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ.-ի թիվ 21/10-2 արձանագրության 5-րդ բաժնի 1-ին կետով և 04.03.2021թ.-ի թիվ 21/10-3 արձանագրության 2-րդ բաժնի «ա» կետով կայացված որոշումները դադարեցնելու պահանջի մասին բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ինչ վերաբերում է «էֆ էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ին որպես նվազագույն գին առաջարկած մասնակից ճանաչելու մասին համանման բողոքով ներկայացված պահանջին, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է և ենթակա է մերժման՝ սույն որոշմամբ՝ «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «էյ-էմ-էյչ Աուդիտ» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելուն և գների նվազեցման նպատակով միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու վերաբերյալ որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարվելու արդյունքում:

Անդրադառնալով «էյ-էմ-էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի 22.03.2021թ.-ին ներկայացրած թիվ ԱՀ/22/03/2021 դիրքորոշմանը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի (04.12.2019թ.-ի թիվ 283-Ն) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում (այսուհետ նաև՝ ռեեստր):

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած

տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Հրավերի 8.21-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով (Հրավերի 8.21) սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի

իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետահիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը *(տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածում ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ Կատարողը պետք է աուդիտորական գործունեությունն իրականացնի «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում և ներկայացնի աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա: Ընթացակարգը

հայտարարվել է 22.02.2021թ.-ին, իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 01.03.2021թ.-ը:

«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից www.reestr.aaaa.am կայքից 18.03.2021թ.-ին կատարված արտատպման համաձայն՝ «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ն ներառված չէ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում:

www.reestr.aaaa.am կայքում առկա ռեեստրի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ կայքի ցանկում բացակայում է կազմակերպությունների մասին գրանցման ամսաթվի վերաբերյալ տեղեկությունները, որպիսի պայմաններում հնարավոր չէ պարզել, արդյո՞ք մինչև հայտերի բացման և հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը, այն է՝ 01.03.2021թ.-ը, «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկությունները գրանցված են մասնագիտական կառույցի ռեեստրում թե ոչ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, Հանձնաժողովի կողմից Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների ռեեստրում գրանցված լինելու՝ տեղեկությունները հրապարակված լինելու հանգամանքի պարզման համար չի կիրառվել Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթը, այդ տվյալների վերաբերյալ ստուգում չի իրականացվել, այն դեպքում, երբ Հրավերով սահմանվել է, որ Կատարողը պետք է աուդիտորական գործունեությունն իրականացնի «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում և ներկայացնի աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա:

Այսպիսով, նման պայմաններում, հաշվի առնելով, որ www.reestr.aaaa.am կայքի ցանկում բացակայում է կազմակերպությունների մասին գրանցման ամսաթվի վերաբերյալ տեղեկությունները, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովը մասնակցների ներկայացրած տվյալների իսկությունը ստուգելու նպատակով պետք է ղեկավարվի Կարգի 67-րդ կետի դրույթներով սահմանված պահանջներով և ստուգի դրանք՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից 09.03.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/17 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և ընդունել գների նվազեցման նպատակով միաժամանակյա նոր բանակցություններ հրավիրելու վերաբերյալ որոշում:

3. «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ.-ին ներկայացված համանման բողոքը բավարարել մասնակի:

4. Դադարեցնել «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ.-ի թիվ 21/10-2 արձանագրության 5-րդ բաժնի 1-ին կետով և 04.03.2021թ.-ի թիվ 21/10-3 արձանագրության 2-րդ բաժնի «ա» կետով կայացված որոշումները:

5. Մնացած մասով համանման բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**